ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «14» հունվարի 2025 թ.

ՀՐԱՄԱՆ N23-Լ

ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնահատման գործունեության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետի և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Կադաստրի կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 749-Լ որոշման 16-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից ամենամյա հաշվետվությունները Կադաստրի կոմիտե ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393

Հավելված
ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի
2025 թվականի հունվարի 14-ի
N 23-Լ հրամանի

Կ Ա Ր Գ
ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Գնահատման գործունեության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից Կադաստրի կոմիտե (այսուհետ՝ Լիազոր մարմին) ներկայացվող ամենամյա հաշվետվությունների լրացման և ներկայացման հետ կապված իրավահարաբերությունները:

II. ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

2. Ամենամյա հաշվետվությունները լրացվում և Լիազոր մարմին են ներկայացվում համաձայն սույն կարգի պահանջների՝ ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը:

3. Ամենամյա հաշվետվությունը բաղկացած է տիտղոսաթերթից, աղյուսակային մասից, բացատրագրից (տեքստային մաս) և գրաֆիկական հավելվածներից:

4. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն ամենամյա հաշվետվությունը Լիազոր մարմին ներկայացնում է տարին մեկ անգամ:

5. Ամենամյա հաշվետվությունների աղյուսակային մասում ընդգրկվում են՝ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության

հնգամյա ծրագրի տարեկան կատարվելիք միջոցառումների և ժամանակացույցով իր իրականացված ծրագրի վերաբերյալ տեղեկությունները, որոնք յուրաքանչյուրի համար լրացվում են առանձին տողերով, իսկ բացատրագրում և գրաֆիկական հավելվածներում՝ առանձին մասերով տրվում են հաշվառման ներկայացրած ծրագրով սահմանված ժամանակացույցով իր իրականացված ծրագրի տոկոսային կշիռը և կատարման ժամկետների վերաբերյալ տեղեկությունները:

6. Ամենամյա հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ Լիազոր մարմնի պաշտոնական կայքի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակի (www.e-cadastre.am) միջոցով, հայերենով և յունիկոդ (unicode) տառաշարով: Ամենամյա հաշվետվության էլեկտրոնային տարբերակի աղյուսակային մասը ներկայացվում է «էքսէլէսէքս» («xlsx») ձևաչափի ֆայլերի տեսքով՝ լրացված հավելվածի ձևաչափում, բացատրագիրը (տեքստային մաս)՝ «դոքս» («docx»), իսկ գրաֆիկական հավելվածները՝ վեկտորային թվային ֆորմատների ֆայլերով՝ հաստատված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ :

7. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պատասխանատու է իր կողմից ներկայացված ամենամյա հաշվետվությունում ներառված տեղեկությունների համար:

III. ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

8. Լիազոր մարմինն ամենամյա հաշվետվությունը ստանալու օրվանից առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է այն՝ դրա ամբողջականությունը և սույն կարգի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Համապատասխանության դեպքում ընդունում է այն, իսկ անհամապատասխանության առկայության դեպքում Լիազոր մարմնում հաշվառված էլեկտրոնային փոստի միջոցով վերադարձնում լրամշակման՝ մատնանշելով առկա թերությունները:

9. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը սույն կարգի 8-րդ կետով սահմանված կարգով լրամշակման վերադրաձված ամենամյա հաշվետվությունը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում լրամշակում է այն և ներկայացնում Լիազոր մարմին՝ ներառելով համապատասխան պարզաբանումները:

10. Ներկայացված ամենամյա հաշվետվությունը սույն կարգով ընդունելուց հետո Լիազոր մարմինը 1 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը էլեկտրոնային փոստի միջոցով:

11. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից ներկայացված այն տարեկան հաշվետվությունները, որոնք սույն կարգի 8-րդ և 9-րդ կետերով սահմանված դեպքերում կրկին չեն համապատասխանում սահմանված կարգին Լիազոր մարմնի կողմից չեն ընդունվում և համարվում են չներկայացված: